



Handwritten signature

Հաստատված է
ԵՊԿ գիտական խորհրդի
2017թ. մարտի 2-ի թիվ 5 նիստում

ԵՊԿ գիտական խորհրդի նախագահ՝
Ա. Հ. Սիմոնյան
«2» մարտի 2017թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) հաշվապահությունը (այսուհետ՝ հաշվապահություն) ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Հաշվապահությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, ԵՊՀ-ի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև հաշվապահության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:
3. Հաշվապահությունը սահմանված կարգով կարող է ունենալ իր անվանմամբ դրոշմակնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

2. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հաշվապահության խնդիրներն են.
 - 4.1. Հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական, հարկային, եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի և այլ հաշվետվությունների (հաշվարկների) կազմումը, համապատասխան մարմիններին սահմանված կարգով և ժամկետներում դրանց ներկայացումը:
 - 4.2. ԵՊՀ-ի գույքի առկայության և շարժի, նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների (ռեսուրսների) օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը:
 - 4.3. Ֆինանսական գործունեության բացասական երևույթների վերհանումը և դրա մասին ղեկավարությանը ժամանակին տեղեկացումը, ներտնտեսական ռեսուրսների բացահայտումը և հավաքագրումը:
 - 4.4. ԵՊՀ ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի, ինչպես նաև գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության

հավաքագրումը, գրանցումը և ընդհանրացումը՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

4.5. Ֆինանսական, հարկային և կառավարչական հաշվառման իրականացումը:

4.6. ԵՊՀ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի կազմումը:

4.7. Փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության, ներքին վերահսկողական համակարգի, ինչպես նաև կառավարչական հաշվառման համակարգի ներդրման և արդյունավետ վերահսկողության իրականացումը:

4.8. ԵՊՀ-ի ներքին իրավական ակտերով սահմանված այլ խնդիրների իրականացումը:

3. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Հաշվապահությունը ղեկավարում է գլխավոր հաշվապահը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ռեկտորը:

6. Գլխավոր հաշվապահը՝

6.1. Կազմակերպում և վերահսկում է հաշվապահության գործունեությունը, ապահովում է հաշվապահության հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում է այլ ստորաբաժանումների հետ հաշվապահության փոխգործակցությունը:

6.2. Կատարում է աշխատանքի բաժանում հաշվապահության աշխատողների միջև:

6.3. Սահմանված կարգով տնօրինում է հաշվապահությանը հատկացված ֆինանսական միջոցները:

6.4. Ներկայացնում է հաշվապահությունը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, հաշվապահության անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

6.5. Կազմում և ներկայացնում է ֆինանսական, հարկային և այլ հաշվետվություններ:

6.6. Պատասխանատվություն է կրում հաշվապահության կողմից իրականացվող աշխատանքների որակի և հաշվապահության առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

6.7. Լուծում է սույն կանոնադրությունից բխող և հաշվապահության գործունեության հետ կապված այլ հարցեր:

7. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է ԵՊՀ-ի բոլոր աշխատողների համար:

8. Հաշվապահության կառուցվածքը ներկայացված է սույն կանոնադրության հավելվածում:

9. Հաշվապահության հաստիքային ցուցակը հաստատվում է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից ռեկտորի ներկայացմամբ:

10. Հաշվապահության աշխատողների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով (աշխատանքի նկարագրով), ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրով, ԵՊՀ ներքին իրավական ակտերով և գլխավոր հաշվապահի հանձնարարականներով:

Աշխատանքային պարտականությունների կատարման արդյունքում ԵՊՀ-ին գույքային (նյութական) վնաս պատճառելու դեպքում աշխատողները կրում են լիակատար գույքային և անձնական պատասխանատվություն:

11. Հաշվապահության գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են ԵՊՀ-ի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը, դրամական միջոցները և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրները:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Հաշվապահության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

13. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՊՀ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊՀ հաշվապահության կազմում ներառված են հետևյալ բաժինները.

- Ֆինանսական բաժին,
- Աշխատավարձի բաժին,
- Ուսման վարձերի բաժին,
- Կրթաթոշակի բաժին,
- Գույքի հաշվառման բաժին: